ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Վերապատրաստվող՝ Հովհաննիսյան Գայանե Ռաֆիկի

Սևանի թիվ 1 <<Բողբոջ>> մանկապարտեզ ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1 ԾՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

1.1 Ծնողական դերի գիտակցման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները……6

1.2 Ծնողական դերի ձևավորման որոշիչ գործոնները……9

1.3 Ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձևերն ու մեթոդները մանկապարտեզում……11

ԳԼՈՒԽ 2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, փուլերը……18

2.2 Ձևավորող՝ հետազոտության ընթացքը……20

2.3 Ստուգիչ՝ հետազոտական աշխատանքի արդյունքների համեմատական վերլուծություն……22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…… 23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն

Ծնողական դերի գիտակցման խնդիրը առավել կարևորվում է այս հիմնախնդրի վերաբերյալ ոչ միանշանակ ընկալման հետ կապված: Ծնողական զգացմունքների և փոխհարաբերությունների հարցը կենցաղային մակարդակում շատ պարզ է և ենթադրում է ծնողների կողմից հասարակական պահանջի, վերարտադրողական գործառույթի և երեխաների խնամքի ու դաստիարակության իրականացում: Սակայն ծնող դառնալու ֆիզիոլոգիական պատրաստվածությունը, կենսաբանական պահանջը ոչ միշտ է համապատասխանում նրա հոգեբանական և մանկավարժական պատրաստվածության հետ:

Ծնողական դերի գիտակցման հարցը քննարկվել են Ա.Ի.Անտոնովի, Ա.Յա.Վարգայի, Լ.Ֆ.Օբուխովայի, Լ.Բ.Շլայդերի, Մ.Միդիի, Ի.Ս.Կոնի աշխատություններում: Յուրաքանչյուր մարդու կյանքում ծնողները մեծ դեր են խաղում՝ նրանցից են կախված երեխաների երջանկությունը, ֆիզիկական և հոգեբանական առողջությունը, դաստիարակության որակը: Ծնող գաղափարը հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել հայր և մայր ամբողջականության մեջ, քանի որ երեխայի կյանքում մեծ դեր ունեն երկու ծնողներն էլ:

Ծնողական դերի գիտակցման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները հասկանալու և ուսումնասիրելու համար անհրաժեշտ է դիտարկել այդ համակարգը ամբողջությամբ (հայր և մայր) ուսումնասիրելով այս ամբողջությունը կազմող կառուցվածքային տարրերը:

Ընտանիքում երեխայի դաստիարակության որակով ծնողական դերի գիտակցված իրականացմամբ է որոշվում հասարակության վիճակը: Այս ամենի ամբողջական ուսումնասիրումը կօգնի մանկապարտեզում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը: Սրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի ձևերն ու միջոցները որպես նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ու դաստիարակության պայման:

Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. ՈՒսումնասիրել և փորձարարական աշխատանքով հիմնավորել ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու անհրաժեշտությունը նախադպրոցական զարգացման գործընթացում:
2. Վերլուծել ծնողական դերի գիտակցման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները:
3. Մշակել մանկապարտեզում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի կազմակերպման ձևեր ու միջոցներ:
4. Փորձարական հետազոտությամբ ստուգել ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը նախադպրոցականի դաստիարակության գործընթացում:

Հետազոտության ընթացքում օգտվել ենք հետևյալ մեթոդներից

- Հիմնախնդրի շուրջ տեսամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն
- Դիտում
- Զրույց
- Փորձարարական հետազոտություն

Հետազոտության գործնական նշանակությունը

Մանկապարտեզում ծնողների հետ կազմակերպվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձևերն ու միջոցները կնպաստեն ծնողական դերի լիարժեք գիտակցմանը, նախադպրոցական տարիքի երեխաների համակողմանի դաստիարակությանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ տեսական և փորձարարական , եզրակացություններից, գրականության ցանկից:

Հետազոտական աշծատանքը իրականացվել է Սևանի թիվ 1 <<Բողբոջ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ում:

ԳԼՈՒԽ 1 ԾՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Ծնողական դերի գիտակցման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները

Ծնողական դերը որպես ամբողջական համակարգ ենթադրում է ծնող հասկացությունը ընկալել հոր և մոր միասնությամբ: Այսինքն անկախ արտահայտման մակարդակից ծնող հասկացությունը ներառում է ամուսինների միասնություն (կին, տղամարդ) և ենթադրում է ծնողական դերը կազմող բաղադրիչների միասնական կիրառում:

Ծնողական համակարգի բաղադրիչների միջև կապը պայմանավորված է ճանաչողական, հուզական և վարքային կողմերով, որոնք համարվում են այսպես կոչված ծնողականության դրսևորման հոգեբանական ձևեր: Այժմ ներկայացնենք այդ բաղադրիչների էությունը և դրանց ծնողական դերի համակարգի վրա ազդեցության մակարդակը:

Ճանաչողական բաղադրիչ

Ճանաչողական բաղադրիչը իրենից ներկայացնում է ծնողների կողմից երեխայի հանդեպ բարեկամական, արյունակցական կապի գիտակցում, իրենից որպես ծնողի պատկերացում , իդեալական ծնողի մասին պատկերացում, ծնողական գործառույթների գիտակցում, երեխայի կերպարի ընկալում: Հարկ է նշել, որ այս բաղադրիչը օգնում է գիտակցել ծնող լինելու այն հիմնական կողմերը, որոնց հայրը կամ մայրը առնչվելու են հետագայում:

Հուզական բաղադրիչ

Այս բաղադրիչը իրենից ներկայացնում է անհատի ՝ իրեն ծնող զգալու սյուբեկտիվ զգացումը, ծնողական զգացմունքները, վերաբերմունքը երեխայի հանդեպ ամուսնու կամ կնոջ կերպարը որպես երեխայի ծնող մարդու վերաբերմունքը՝ իր որպես ծնողի նկատմամբ:

Վարքային բաղադրիչ

Այս բաղադրիչը իրենից ներկայացնում է երեխային խնամելու ընդունակությունների, հմտությունների, կարողությունների նյութական ապահովման , դաստիարակության, ուսուցման համակարգ:

Ծնողական դերի գիտակցման նախնական փուլում ծնողների միջև առաջանում են բաղադրիչների անհատական ընկալում, դա պայմանավորված է կնոջ և տղամարդու կողմից ծնող լինելու տարբերակված գիտակցումից, որը նախնական փուլում առաջ է բերում կոնֆլիկտային իրավիճակներ: Մայրը և հայրը ունենում են երեխայի դաստիարակության, խնամքի վերաբերյալ տարբեր կարծիքներ:

Ծնողական դերի ընկալման նախնական փուլում տեղի է ունենում ծնողական պարտականությունների, գործառույթների, խնամքի, դաստիարակության կազմակերպման համաձայնեցում: Այսինքն, տեղի է ունենում ծնողական դերի տեսական գիտակցում: Մինչ երեխայի ծնվելը այս դերի գիտակցումը իրականանում է զրույցների, երազանքների, ապագայի հետ կապված պլանների քննարկման միջոցով:

Այսպիսով, ծնողական դերի գիտակցման նախնական մակարդակը ունի անկայուն կառուցվածք, չկան հստակ պատկերացումներ ընտանեկան դաստիարակության, ընտաեկան արժեքների, ծնողական փոխհարաբերությունների, զգացմունքների, դիրքի, պատասխանատվության, ակնկալիքների և սպասումների վերաբերյալ:

Ծնողական դերի գիտակցման հաջորդ փուլը տեղին է ունենում երեխայի ծնվելուց հետո, այն ունի առավել զարգացած ձև, բնութագրվում է հարաբերական կայունությամբ և իրականացվում է ամուսինների՝ ծնողական դերի մասին միասնական պատկերացումների, փոխադարձ համաձայնության հիման վրա: Ծնողներն առավել լրջությամբ են վերաբերվում իրենց դերին:

Ծնողական համակարգը որպես միասնական հոգեբանական համակարգ կազմված է հետևյալ մասերից.

1. Ընտանեկան արժեքներ:

2. Ծնողական ակնկալիքներ:
3. Ծնողական վերաբերմունք:
4. Ծնողական զգացմունքներ:
5. Ծնողական դիրքորոշում:
6. Ծնողական պատասխանատվություն:
7. Ընտանեկան դաստիարակության ոճ:

- Ընտանեկան արժեքներն են՝ սեփական և ծնողական ընտանիքի գիտակցում:
- Ծնողական ակնկալիքներն են՝ իդեալական կամ իրական կերպարի ուղղորդում:
- Ծնողական վերաբերմունք՝ ընտանիքում երեխայի հետ ճիշտ փոխհարաբերությունների կառուցում, երեխայի անձի նկատմամբ հարգանք:
- Ծնողական զգացմունքներ՝ ընտանիքի անդամների զգացմունքները հասկանալու ունակությունների ձևավորում:
- Ծնողական դիրքորոշում՝ երեխայի հետ փոխգործունեության ապահովում:
- Ծնողական պատասխանատվություն՝ պատասխանատվություն սեփական վարքի հանդեպ:
- Ընտանեկան դաստիարակության ոճ՝ ծնողի վարքային մոդելի ընդունում երեխային տրվող ազատության վերաբերյալ պատկերացումներ:

Այս ամենը իրականացնելու և ընտանիքում կիրառելու համար անհրաժեշտ է կազմակերպել ծնողական կրթություն՝ ծնողներին զինել մանկավարժական գիտելիքներով, հմտություններով, կարողություններով:

1.2 Ծնողական դերի ձևավորման որոշիչ գործոնները

Ընտանիքում ծնողները ոչ հաճախ են ունենում մանկավարժահոգեբանական գիտելիքներ, չեն կարողանում իրենց և երեխայի միջև ճիշտ հարաբերություններ հաստատել, չեն տիրապետում անձի զարգացման համար բավարար գիտելիքների:

Այդ է պատճառը, որ նախադպրոցական կրթության համալիր ծրագրերը՝ նախատեսված տարբեր տարիքի երեխաների համար , ոչ միայն նախատեսում են կրթադաստիարակչական աշխատանք երեխաների հետ, այլև որոշակի աշխատանք ծնողների հետ:

Մինչև մանկավարժական աշխատանքի կազմակերպումը, առանձնացնենք այն գործոնները, որոնք որոշիչ են ծնողական դերի ձևավորման համար:Հոգեբանության մեջ ծնողական դերի կազմավորման գործոնների թվում առավել ուսումնասիրվող է համարվում վերարտադրության գործոնը (Ա.Ի.Անտոնով, Վ.Վ.Բոյկո, Վ.Ա.Բորիսով, Ա.Ի.Կուզմին, Լ.Ի.Սավինով և այլն):

Անհրաժեշտ է նշել որ գիտնականները ավելի հաճախ խոսում են ծնողական (հայրական) ընտանիքից կախվածության գործոնների մասին:Ծնողական ընտանիքը մեծ ազդեցություն է ունենում մասնագիտության և կողակցի ընտրության հարցում: Է. Բեռնը նշում է, որ որոշումների կայացման հարցին մասնակցում են նաև չգիտակցված հիմնադրութներ, որոնք երեխայի մեջ սերմանել են ծնողները դեռևս փոքր տարիքում: Վ.Վ.Բոյկոն մարդու վերարտադրողական վարքագծի վերաբերյալ առանձնացնում է գործոնների խմբի երեք հիմնական տեսակ.

- Սոցիալ-հոգեբանական հարմարվողականություն (կանանց զբաղվածություն, կրթություն և մշակույթ, հասարակության տնտեսական զարգացում)
- Ծնելիության գործոնների սոցիալ-հոգեբանական հարմարեցում մինչև ընտանեկան մակարդակի
- Ծնելիության գործոնների սոցիալ-հոգեբանական հարմարեցում մինչև անձնային մակարդակի

Լ.Ֆ.Օբուղովան և Օ.Ա. Շագրաևան ընտանիքի կենսակերպի մասին իրենց հետազոտության մեջ հիմնական ուշադրությունը ուղղում են ընտանիքի կենսագործունեության սոցիալ-հոգեբանական կողմին: Սակայն նրանք ուսումնասիրում են այս գործոնները ոչ թե ծնող դառնալու տեսանկյունից, այլ երեխայի անձի ձևավորման տեսանկյունից:

Գրականության վերլուծությունը (Լ.Ս.Վիգոտսկի, Ս.Լ. Ռուբինշտեյին, Կ.Ա.Աբուխանովա, Լ.Ֆ.Օբուխովա, Օ.Ա. Շագրաևա, Վ.Վ.Բոյկո, Ա.Ա. Սպիվակովսկայա, Վ.Ն.Պրուժինի, Լ.Բ.Շնեյդեր և ուրիշներ) ցույց տվեց, որ գիտնականների կողմից ավելի վաղ ուսումնասիրված պայմանների բազմազանության միջից կարելի է առանձնացնել գործոնների մի խումբ, որը ձևավորում է համակարգ, ինչը հնարավորություն է տալիս որոշել ծնողական դերի կազմավորումը:

Հիմնվելով Լ.Ֆ.Լոմովի տեսակետի վրա, այն է՝ հոգեբանական կրթության մակարդակային վերլուծությունը թույլ է տալիս ուսումնասիրել նրա կազմակերպական միասնությունը, բացահայտել երևույթի բազմազանությունը, որոշել ծնողական դերի կազմավորման գործոնների համակարգը:

1.3 Ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի ժամանակակից ձևերն ու մեթոդները մանկապարտեզում

Ծնողների մանկավարժական կրթության կազմակերպման ուղղություններն են.

- Դասախոսություններ՝ դաստիարակության այս կամ այն խնդրի բացահայտման և հոգեբանամանկավարժական աջակցման ձև է:

- Կոնֆերանսներ՝ նախատեսում է երեխաների դաստիարակության մասին գիտելիքների ընդլայնում, խորացում և ամրապնդում:
- Մանկավարժական բանավեճ՝ հնարավորություն է ստեղծում ներկաների ուշադրությունը հրավիրել քննարկվող խնդիրների վրա:
- Դերային խաղերէ համատեղ ստեղծագործական գործունեության ձև է, որի նպատակն է ուսումնասիրել մասնակիցների մանկավարժական կարողությունների ձևավորման մակարդակը:
- Թեմատիկ սեմինարներ՝ նպատակը երեխաների դաստիարակության փորձի փոխանակումն է, գրավում է ծնողական և մանկավարժական հասարակայնության ուշադրություն:
- Հարց ու պատասխանի երեկոններ՝ ծնողների հարցերին պատասխանում են հրավիրված մասնագետներ՝ հոգեբաններ, իրավաբաններ, մանկավարժներ, բժիշկներ, լոգոպեդներ, հատուկ մանկավարժներ:
- Անհատական աշխատանք ծնողների հետ:
- Մանկավարժի և ծնողների համագործակցության խմբային ձև է:
- Ծնողական ակումբ՝ պահանջում է հատուկ նախապատրաստում, իրականացվում է հանդիպումների ձևով, նպատակն է հետաքրքրել ծնողներին քննարկվող դաստիարակչական հարցերի շուրջ:

Ծնողների հետ տարվող աշխատանքի բոլոր ձևերն էլ իրականացվում են մանկապարտեզում ստեղծելով վստահության և համագործակցության մթնոլորտ այն մեծահասակների կոլեկտիվում, ովքեր շրջապատում են երեխային:Ծնողները պետք է համոզվեն որ մանկապարտեզը կաջակցի մանկավարժական խնդիրների լուծմանը, հաշվի առնելով իրենց կարծիքներն ու առաջարկությունները:

Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն դաստիարակ կամ ուսուցիչ: Այս պարագայում մանկապարտեզում դաստիարակության գործընթացի հիմնական օբյեկտը հենց սոցիալ-արժեքային հարաբերությունները կրող անձն է, անհատականություն, ով դեռևս մանկապարտեզից ազատ է և անկաշկանդ: Սակայն անձի ձևավորումը երկար ու

դժվարին ճանապարհ է պահանջում:Դաստիարակի խնդիրը ոչ միայն այսօրվա չափորոշչային պահանջներին համապատասխան գիտելիքների արժեքային համակարգի ստեղծումն է, այլև սանի մեջ անհատական որակների զարգացումը, ստեղծագործական երևակայությամբ վարակելը, գեղեցիկը տեսնելն ու գնահատելը, վերջապես՝ ամեն ինչում երեխայի հոգեբանական պատրաստվածությունն ու տրամադրվածությունն ապահովելը: Չափազանց կարևոր է ուսումնական գործունեության ու դաստիարակության գործընթացների ճիշտ հարաբերակցումը և զուգակցումը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը երեխայի համար ապահովի՝

1. դրական հույզեր ու ապրումներ
2. յուրաքանչյուր օրը տոն դարձնի

Երեխային երջանիկ տեսնելու ակնկալիքով հարկավոր է մանկավարժահոգեբանական գիտելիքներ հաղորդել նաև ծնողներին՝ ապահովելով վերջիններիս մանկապարտեզի կյանքին առավել ակտիվ մասնակցությունը: Երեխայի համար մանկապարտեզ հաճախելը պետք է դառնա հաճելի կենսակերպ: Յուրաքանչյուր օր նա ուրախությամբ պետք է պատրաստվի, երջանիկ և ուրախ ոտք դնի մանկապարտեզ: Սակայն ոչ միշտ է այսպես սկսվում: Հաճախ ծնողն անուղղակիորեն իր լարվածությունը փոխանցում է երեխային, արդյո՞ք լավ կվերաբերվեն, չե՞ն նեղացնի կկերակրեն ըստ պատշաճի, կօգնեն հագնվել քնից արթնանալուց հետո…

Նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է մանկավարժական գիտելիքներով դիմել նաև ծնողներին, նրանց համար կազմակերպելով սեմինար-պարապմունքներ, որոնց համար կարելի է ընտրել հետևյալ հարցերին ընդգրկող թեմաներ.

1. Ովքե՞ր են աշխատելու երեխայի հետ:
2. Ի՞նչ ռեժիմով է աշխատում մանկապարտեզը խմբերի հետ:
3. Ո՞ր հարցով ու՞մ պետք է դիմի ծնողը:

4. Ինչպիսի՞ սովորույթներ կան տանը:
5. Ինչպե՞ս հաղթահարել երեխայի՝ մանկապարտեզ գնալու հետ կապված դժվարությունները:
6. Ինչպե՞ս են ազդում ծնողների փոխհարաբերությունները երեխայի մանկության տարիների վրա:
7. Ինչպե՞ս կազմակերպել երեխայի առողջ կենսակերպն ու հիգիենան և այլն:

Ընտանիքի հետ համագործակցությունն առավել հեշտ կստացվի, եթե առաջին իսկ ծնողական ժողովի ընթացքում առաջարկվի թեստի մի տեսակ.

- Ձեր անուն, ազգանունը: Կրթությունը: Մասնագիտությունը:
- Սպասելիքները մանկապարտեզից:
- Ձեր երեխայի հետաքրքրությունները , նախասիրությունը:
- Ի՞նչ խաղալիքներով է խաղում: Ինչո՞վ է սիրում զբաղվել:
- Ներկայացրեք երեխայի հետ կապված որևէ դեպք:
- Ինչո՞վ եք դուք իրեն առանձնացնում, նրա յուրահատկությունը:

Ընտանիք, մանկապարտեզ ապա նաև մանկապարտեզ-դպրոց կապը իրական տեսնելու ակնկալիքով անհրաժեշտ է սեմինարների ժամանակ պարզել, թե ի՞նչ ցանկություն ունի. ծնողը երեխայի դաստիարակության, նրա բնականոն աշխարհընկալման ձևավորման առումով որտե՞ղ է դժվարանում: Ի՞նչ հարցեր են հուզում այն ծնողին, ով միայնակ է մեծացնում երեխային: Ի՞նչ անել, որպեսզի երեխան, դեռ մանուկ հասակից չտառապի թերարժեքության բարդույթներով, տխուր չլինի, անվերջ ժպտա, զգա մանկության բերկրանքը: Ծնողների հետ շփման նման միջավայրը փոխվստահության մթնոլորտ է ապահովում. ծնողն անկեղծ է, և այս դեպքում երեխայի զարգացումը, ինչն իրականացնում են երկուստեք, նույն ուղղվածությունն է ստանում , իսկ այնուհետև շարունակություն ստանում դպրոցում: Ն/դպրոցականի ՝ 21-րդ դարի ազատ , անկախ երիտասարդ ծնողն սպասում է, որ իր համար ևս մանկապարտեզը հաճելի վայր լինի, վերածվի ուսուցողական այնպիսի միջավայրի, ուր ինքը կստանա իրեն ևս հետաքրքրող հարցերի պատասխանները: Դա հնարավոր է իրականացնել միջոցառումների, ժողովների, սեմինարների ու

աշխատակիցների հետ առանձին հանդիպումների ընթացքում: Մեր ժամանակներում փոքր-ինչ հնացած է թվում դաստիարակի այցը երեխայի ընտանիք: Սակայն կան բացառիկ դեպքեր, երբ՝

- Չափազանց մշուշոտ է թվում երեխայի ընտանիքի առօրյան ու անվստահելի է նրա դաստիարակությունը:
- Զգացվում է, որ կա բռնություն, ոտնահարվում են երեխայի իրավունքները:
- Ֆիզիկական պատիժ է կիրառվում:
- Երեխան մեծանում է վախի ու սարսափի մթնոլորտում:
- Ականատեսն է ծնողների վեճի ու կռվի՝ սոցիալական շատ խնդիրների պատճառով:

Նման դեպքերում երեխայի տուն այցելելն անհրաժեշտություն է ու պարտադիր: Դա առիթ է տալիս, որ երեխան ավելի մտերմանա մանկապարտեզի աշխատողների հետ, շփման դաշտն առավել ջերմանա և դառնա արդյունավետ:

Ծնողներին պետք է ծանոթացնել այն խնդիրներին, որոնց լուծման շարունակությունն իրենք պետք է իրականացնեն՝ համագործակցելով դաստիարակների հետ: Մակարենկոն նշել է.<<…ընտանիքը դաստիարակում ՝ ինչպես կարող է >>: Մենք՝ մանկավարժներս, պետք է ուղղորդենք այդ գործընթացը: Կազմակերպված ժողովները, միջոցառումները, փորձի փոխանակումն ու հաղորդումը, ծնողական օրերը, տնային այցելությունները պետք է ոչ թե պարտադրանք լինեն, այլ հետաքրքիր՝ ծնողների համար: <<Դաստիարակի գործունեության մեջ ոչ մի բան չպետք է լինի առանց դաստիարակության>>,- ասել է Աբովյանը: Իմ կարծիքով նախադպրոցական հասակի երեխաների ընտանիքում ոչ բնականոն հարաբերություններն ու սոցիալական պայմանների հետևանքով ծառացած կոնֆլիկտների կամ անդորրը խաթարված լինելը բացասաբար է ազդում դաստիարակության վրա. երեխան դառնում է չար, օգտագործում վատ բառեր, դառնում ագրեսիվ, լուռ, տխուր ու անտարբեր: Աբովյանը գրել է. <<Ինչ վատ բնություն, որ մարդ երեխա ժամանակ է սովորում, նրան մեծության ժամանակ էլ ճար չի ըլիլ>>: Սա չէ՞ արդյոք պատճառը, որ հետագայում դա սխալմամբ որակում ենք որպես գենետիկ, ժառանգական խնդիր:

Ծնողը պետք է մեր օգնությամբ գիտակցի, դաստիարակություն ասվածը հատուկ բանաձև չունի, այլ դա երեխայի տեսածն է ընտանիքում. ինչպես են միմյանց վերաբերվում ծնողները, տան մեծերը, ինչպիսի ուշադրություն են տածում միմյանց հանդեպ, ինչպիսին են տան կենցաղը, մաքրությունը, ապրելակերպը… Ահա այս իրավիճակում էլ սովորում ու մեծանում է երեխան:

Լև Տոլստոյն ասել է .<<Ամենաանշան մանրուքներն անգամ օժանդակում են երեխայի բնավորության և էության կազմավորմանը>>: Եթե ծնողներն ու մանկավարժները հասկանան, որ ուսուցման ու դաստիարակության մեջ չկան մանրուքներ, ապա հենց համագործակցային աշխատանքի շնորհիվ էլ կիրականացնեն մի մեծ առաքելություն՝ երեխայի համար ժպտուն, պայճառ առօրյայի ապահովումն ու լիարժեք մարդ ձևավորելու վեհ գործը:

Երեխաների սոցիալական զարգացման վրա ներազդումը իրականացվում է ընտանիքում, որը հանդիսանում է գիտելիքների, արժեքների, վերաբերմունքի դերերի և սովորույթների ուղեկիցը սերնդե-սերունդ: Սոցիալական զարգացման արդյունքում ձեռքբերվող անձի ՝ սոցիալական զարգացման առավել կարևոր գործոնը ընտանիքի մթնոլորտը, նրա դաստիարակության ոճն է: Այն ըստ էության՝ թե ինչպես է իրականացվում ծնողների շփումը երեխաների հետ, շատ բանով կախված է դաստիարակության ոճից, որն էլ բնորոշվում է այն արժեքներով, որ ընդունված են ընտանիքում և ծնողները ձգտում են հաղորդել երեխաներին: Ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին, ընդգրկվեն օգտագործվող ավանդութային և ոչ ավանդութային աշխատանքի ձևերում ու միջոցառումներում: Նրանց համար պետք է կազմակերպել դասախոսություններ, քննարկումներ, կլոր սեղաններ, խորհրդակցություններ, անկետային հարցաթերթիկի հիման վրա մշակել միջոցառումներ, բաց դռների օրեր, որոնք կօգնեն նրանց ծանոթանալու երեխաների դաստիարակության, ուսուցման ժամանակակից հիմունքներին, հոգեբանական առանձնահատկություններին, որոնք ի վերջո կնպաստեն ընտանիքում երեխայի դաստիարակությունը շարունակելու համար ձևերի և միջոցների ճիշտ ընտրությանը:

Ներկայացնում ենք մանկապարտեզ-ընտանիք համակարգված աշխատանքների կազմակերպման միջոցները՝

- Պաստառներ ծնողների համար՝ <<Մեր հաջողությունները>>
- Բաց դռների օրեր-էքսկուրսիա մանկապարտեզում , պարապմունքների դիտում, ժամանցի կազմակերպում
- Խորհրդատվություն հեռախոսով-ծանոթացում ծնողներին մանկապարտեզի աշխատանքի բովանդակության տարբեր կողմերի հետ
- Անկետավորում-մանկապարտեզի կրթական և առողջապահական խնդիրների շուրջ պահանջմունքների բացահայտում (<<Ինչ սպասելիքներ ունեք մանկապարտեզից>>, <<Բավարարված եք մանկապարտեզի գործունեությունից>>, <<Ինչպիսի գործնական օգնության կարիք ունեք>>):
- Մանկավարժական հայացքների տարածում-տեղեկատվական պաստառներ, երեխաների և ծնողների համար ցուցահանդեսներ, թեմատիկ-գեղարվեստական միջոցառումներ:
- Ծնողական ժողովներ՝ ընդհանուր և խմբային:
- Մեթոդական միջոցառումներ՝ կլոր սեղան <<Երեխայի իրավունքները>>, բանավեճ՝ պատիժ, խրախուսանք:
- Ժամանց՝ ծնողների մասնակցությունը տոնական ցերեկույթների նախապատրաստմանը <<Առողջության օր>>, <<ՈՒրախների և հնարամիտների ակումբ>>, <<Մեծերը երեխաների համար>>, <<Հայրիկը, մայրիկը, ես՝ սպորտային ընտանիք>>:
- Մանկապարտեզի բարեկարգմանն ուղղված աշխատանքներ՝ շաբաթօրյակներ, զարգացնող առարկայական միջավայրի ստեղծման աշխատանքներ:

Ծնողների հետ կազմակերպվող անհատական զրույցները գնահատելի են նրանով, որ դաստիարակին հնարավորություն են տալիս միշտ շփման մեջ լինել ընտանիքի հետ և ավելի ազատ, բաց խոսել երեխայի մասին: Այս զրույցները լինում են կարճատև, բայց կարող են ձեռք բերել շատ մեծ նշանակություն, քանի որ դաստիարակին և

ընտանիքին իրազեկ են դարձնում երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և հնարավորություն են տալիս անմիջապես ազդել երեխայի վարքի վրա: Հարկ չկա ծնողների հետ զրույց սկսել գանգատներից: Ավելի նպատակահարմար է նախ նշել երեխայի բնավորության իրական կողմերը, լավ արարքները: Խորհրդատվությունները կարելի է անցկացնել անհատական և փոքր խմբերով:

Ծնողների մանկավարժական լուսավորմանը նպաստում է շարժական թղթապանակների ստեղծումը, որն իր մեջ պարունակում է տեղեկատվություն, խորհուրդներ երեխայի կյանքն ու գործունեությունը ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու, ինչպես նաև մանկապարտեզի մանկավարժական գործընթացը լուսաբանող տարբեր նյութեր:

Այսպիսով , մանկապարտեզում ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքի համակարգված ձևերն ու միջոցները բարելավում են ծնողների մանկավարժական կրթության մակարդակը՝ ի նպաստ երեխաների համակողմանի դաստիարակության և ընդհանուր զարգացման:

ԳԼՈՒԽ 2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, փուլերը

Փորձարարական հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության առանձնահատկությունները ընտանիքում՝ պարզելու ծնողների վերաբերմունքը և գնահատականը ընտանեկան դաստիարակության վերաբերյալ, նրանց մանկավարժական գիտելիքները երեխայի զարգացման գործընթացում: Մեր հետազոտությունը անց ենք կացրել Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզում:

Հետազոտության ընդգրկված են եղել 29 երեխա, ինչպես նաև 29 ծնող:

Նախադպրոցական հաստատություններում ծնողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի կազմակերպման նպատակով անց ենք կացրել

փորձարարական հետազոտություն երեք փուլերով՝ արձանագրող, ձևավորող, ստուգիչ:

Արձանագրող փուլում ներկայացված են անցկացրած դիտարկումների, զրույցների արդյունքները: դիտումներն անց են կացվել օրվա կարգացույցի բոլոր պահերին, գործունեության տարբեր ձևերի ընթացքում՝ խաղ, պարապմունքներ, միջոցառումներ և այլն:

Այս փուլում հարցերի, զրույցների միջոցով բացահայտվեց ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տիրապետման մակարդակը:

Ձևավորվող փուլում ներկայացված է մեր կողմից իրականացված աշխատանքը՝ ուղղված ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածմանը համապատասխան մեթոդներով և միջոցներով:

Ստուգիչ փուլում ներկայացված է նպատակաուղղված մանկավարժական աշխատանքից հետո ստացված արդյունքների համեմատությունն ու վերլուծությունը:

Հետազոտությունն արդյունավետ անցկացնելու համար օգտվել ենք դիտման, հարց ու պատասխանի, զրույցի, անկետավորման մեթոդներից, մշակել ու կազմել ենք հարցարանները ծնողների համար, անցկացրել ենք թեմատիկ զրույցներ, տվել ենք մանկավարժական համապատասխան գիտելիքներ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման առանձնահատկությունների շուրջ, խորհուրդներ ծնողներին, թեստեր ծնողների համար «Ինչպես դաստիարակել», «Ինչպիսի ծնող եք»:

Երեխաների հետ անցկացրել ենք հետևյալ մեթոդիկաները «Նկարիր ընտանիքիդ անդամներին», «Որ գույնը ում կնվիրես», «Ընտանիքը երեխայի աչքերով»: Պարապմունքների և խաղերի ժամանակ դիտել ենք երեխաների վարքը, շփումը հասակակիցների և դաստիարակի հետ, զրույց ենք անցկացրել երեխաների հետ՝ բացահայտելու նրանց դիրքորոշումը ընտանիքի անդամների, մասնավորապես մոր և հոր հանդեպ:

2.2 Արձանագրող փուլ

Ծնողների 25-30%-ը կամ ունեին մանկավարժական կրթություն և երեխաների հետ իրականացնում էին համապատասխանաբար ճիշտ դաստիարակչական աշխատանք կամ չունեին մանկավարժական կրթություն սակայն զբաղվում էին ինքնակրթությամբ:

«Ծնողների 15%-ը չունենալով մանկավարժական կրթություն, այնուամենայնիվ կապի մեջ էին դաստիարակի հետ, հետևում էին երեխաների առօրյային մանկապարտեզում:

Ծնողների 55%-ը, կրթություն և երեխաների դաստիարակության խնդիրները լիովին տեսնում էին դաստիարակի գործունեության մեջ և մանկապարտեզի մանկավարժական գործընթացում:
Արձանագրող փուլում կիրառեցինք «Անավարտ նախադասությունների

շարունակութ]ուն» մեթոդիկան, խնդրեցինք ծնողներին անկեղծ պատասխանել

հարցերին:

Հարցաշար ծնողների համար

1. Ես շատ եմ սիրում, երբ իմ երեխան .....
2. Ես կցանկանայի, որ նա .....
3.Ես կցանկանայի, որ իմ երեխան ավելի մեծ ուշադրություն դարձներ.....
4. Իմ երեխային հետաքրքրում է .....
5. Նա չի սիրում, երբ .....
6. Երբ իմ երեխան գալիս է մանկապարտեզ .....
7. Իմ երեխայի մեջ ինձ դուր է գալիս .....
8. Ես վախենում եմ, որ .....
9. Ես կցանկանայի, որ նա դառնար.....
10. Իմ երեխայի բնավորության ամենակարևոր գիծն այն է, որ նա.....
11. Իմ երեխան տանել չի կարողանում, երբ պատժվում է.....
12. Նա հաճախ խաղում է.....
13. Մտածում եմ, որ նա խանգարում է.....
14. Մեր հարաբերությունները երեխայի հետ տանը.....

Վերլուծելով անավարտ նախադասությունների մեթոդիկան, եկանք այն եզրահանգման, որ հարցմանը մասնակցած ծնողներից 6 ծնող ունեն

մանկավարժական գիտելիքների տիրապետման բարձր մակարդակ (20%), 10 ծնող ունի միջին մակարդակ (33%), իսկ 13 ծնող ունի ցածր մակարդակ (47%):

2.2 Ձևավորող փուլ

Ինչպես արդեն նշել ենք, ընտանեկան դաստիարակության անհաջողությունների պատճառները թաքնված են կրթադաստիարակճական աշխատանքին ծնողների պատրաստ լինելու, երեխայի հոգեկան զարգացման գործընթացները հասկանալու նրանց անկարողության մեջ:

Ծնողների հետ տարվող աշխատանքներում առանձնացնում ենք հետևյալ անհրաժեշտ պայմանները՝

- Երեխայի ընտանիքի կենսաձևի ուսումնասիրում
- Երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում, և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում
- Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերություններ հաստատում
- Երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում
- Ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում
- Ծնողներին գործնական, մանկավարժական օգնության ցուցաբերում
- Ծնողների մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում

Մեր նպատակին հասնելու համար կազմակերպեցինք հանդիպումներ ծնողների հետ՝ մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ: Մասնավորապես կիրառեցինք <<Ինչպես դաստիարակել>>, <<Ինչպիսի ծնող եք>> թեստերը:

Երեխաների հետ անցկացրել ենք պարապմունքներ:

Պարապմունք 1

Թեման «Իմ ընտանիքը »

Պարապմունքի նպատակը- արթնացնել սեր և հարգանք ընտանիքի անդամների հանդեպ, ձևավորել դրական հարաբերություններ նրանց հետ, դաստիարակել հոգատարություն ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ:

Անհրաժեշտ պարագաներ, մատիտներ:- ընտանեկան լուսանկարներ, թուղթ, արհեստական ծառ:

Պարապմունքի ընթացքը- նախնական զրույց ընտանիքի մասին, բացատրել, թե ովքեր կարող են լինել ընտանիքի անդամները, առաջարկել հանելուկներ ընտանիքի անդամների մասին, ընդգծված վերաբերմունք ցուցաբերել ընտանիքի տարեց անդամների նկատմամբ: Խոսել ծնողների և տան ամենափոքր անդամների մասին: Բացատրել ընտանիքում յուրաքանչյուրի նշանակությունը, առաջարկել պատրաստել գրքեր «Իմ ընտանիքը», փորձել պատմել դրանց բովանդակությունը , հետևել երեխաների վերաբերմունքին: Պարապմունքի ավարտին բոլոր գրքերը կախել ծառի ճյուղերից և ջերմ մաղթանքներ ասել ընտանիքի անդամների վերաբերյալ:

2.3 Ստուգիչ փուլ

Ստուգիչ փուլում կազմակերպված զրույցների , հարցադրումների , թեստերի Շարդյունքում պարզվեց ,որ հարստացել է ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակը' երեխաների դաստիարակությոն վերաբերյալ:

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում պայզեցինք, որ ծնողների հիմնական մասը չունի մանկավարժական կրթություն, չի տիրապետում երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին : Նրանք հիմնականում հենվում են մանկապարտեզում իրականացվող կրթադաստիարակչական այխատանքի վրա: Որոշ ծնողներ ինքնուրույն օգտվում են համապատասխան լրատվական աղբյուրներից ամսագիր հեռուստատեսային հաղորդաշարեր, ռադիոհաղորդումներ գիտահանրամատչելի գրականություն և այլն, և այդ հիմքով կազմակերպում իրենց երեխաների առօրյան:

Այսպիսով մեր կողմից կատարած տեսական ուսումնասիրություններն ու փորձարարական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերումը կխթանի երեխաների ընդհանուր զարգացմանն ու համակողմանի դաստիարակությանը:

Եթե բոլոր ընտանիքներում ծնող-երեխա փոխհարաբերությունը կառուցվի սիրո, համերաշխության ու ներողամթության, միմյանց զիջելու և դիմացինի կաչծիքը հաշվի առնելու սկբունքով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրության արդյունքումեկանք այն համոզման, որ նախադպրոցական տարիքում է դրվում անձնավորության ձևավորման հիմքերը, այս տաիիքում է տեղի ունենում անձնավորության հիմնական ձևավորումն ու զարգացումը: Զարգանում են միմյանց հետ սերտորեն կապված հուզական, դրդապատճառոյին ոլորտները, ձևավորվում է ինքնագիտակցությունը:
- ✓ Նախադպրոցական տարիքը դաստիարակչական ներազդեցության և հասարակական միջավայրի ազդեցության նկատմամբ բարձր զգայունակության ժամանակաշրջան է: Այս տարիքային փուլում է ստեղծվում այն հիմքը, որի վրա հետագայում կառուցվում է դաստիարակության և ուսուցման ողջ համակարգը, ձևավորվում անձնավորությունը:

- ✓ Փորձարարական հետազոտության ընթացքում ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվեցին հետևյալ աշխատանքները՝ ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների ստեղծում, հոգեբանամանկավարժական գիտելիքների հարստացում, ծնողերի մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում, համապատասխան տեղեկատվության տրամադրում, մանկապարտեզում իրականացվող որոշակի աշխատանքներին ծնողների ներգրավում՝ թեստերի, պարապմունքիերի, թեմատիկ սեմինարների, տոնական միջոցառուների միջոցով:
- ✓ Իրականացրած փորձարարական աշխատանքների արդյունքում զգալի բարձրացավ ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման մակարդակը, հստակեցվեցին երեխաների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները, ծնողների վերաբերմունքը ներառական կրթության, ինչպես նաև երեխայի հասակակիցների, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Է. Ա. Մեր երեխան, նրա զարգացումն ու դաստիարակությունը, Երևան 1989թ., էջ 42-43

2. Երկխոսություններ դաստիարակության մասին, Գիրք ծնողների համար, Ստոլետովի խմբագրությամբ, Երևան 1980թ., էջ 30

3. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008թ., էջ 67,82

4. Մարության Ս. Ա., Նախադպրոցականի ինքնուրույնության ձևավորումը միջանձնային հարաբերություններում, Երևան 2008թ.

5. Միտոյան Հ., Սմբատյան Լ. Ուսումնական ձեռնարկ մանկապա-տեզի համար, Երևան 2010թ.

6. Պետրովսկի Ա. Վ., Երեխաները և ընտանեկան դաստիարակության տակտիկան, Երևան 1983թ., էջ 34, 35

7. Նախաշավիղ ամսագիր 2016թ. թիվ 5/էջ 45-49/

8. Амонашвили Ш.А. Искуство семейное воспитание, Москва 2013г.

9. Воспитание детей дошкольного возраста в условиах семьи и детского сада. Под ред. Т. И. Оверчук, Москва 2003г.

10. Зверева О. Л., Ротова Т. В., Общение педагога с родителями, Москва 2005г.

11.Ծնողական կրթություն

12. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր;/էջ 136-139/

13.Նախաշավիղ 2013թ թիվ 1/ էջ 25-29/